

Պաշտօնը և ճանապարհը, հրապարակը և գիւղը, եկեղեցիք և արքունիք, միջին դարն ու ներկայն, իշխանք ու քաղաքացիք, շինականք ու զինուորք, քաղաքք և աւանք, դղեակք ու տնակք, միով բանիւ ամենայն ինչ կ'երևին միա-

համուռ իր վիմադրութեանց ու իւղաներկ նկարուց մէջ:

Այնքան մեծցաւ Մենցելի համբաւն որ անդամ անուանեցին զինքը Պետլինի գեղարուեստից Ակադեմիային:



ԱՏՈՒՓՈՍ ՄԵՆՑԵԼ

ԲԱՆԷՌԲԱՐԱՆ

Բալէդբարա այն անմահանունն անձն է, որուն հանճարոյն առջին գոգցես և բնութիւնն իսկ զարհուրելով տեղի տուաւ. Բալէդբարա այն սակաւածին մարդկանցմէ է՝ որոյ վրայ կրնան պարծիլ ամենայն ազինք թէ ծնան զնա. վասն զի երկարատե կենօրն օգտակար եղաւ ոչ միայն իր հայրենեաց այլ

և բոլոր աշխարհի: Կապուած է անունը ոչ թէ միայն իտալական ազգային ազատութեան դարուն ու դիպաց հետ, այլ և դարուս մեծամեծ ձեռնարկութեանց ու իրաց հետ: Միացուց իր վրայ ի ծայրագոյն աստիճանի հայրենեաց ու գիտութեան սէրը, ուստի յաջողելով այն երկու սիրելութեան մէջ, կոչեցաւ զլուխ ճարտարապետաց և նահատակ հայրենեաց:

Այս երևելի անձը ծնաւ 'ի Պերկամոյ յամին 1788 : Նախ՝ յետ աճելոյ հասակին՝ երեք տարի օրէնսգիտութեան պարապելէն ետքը, թուաբանական գիտութեանց տուաւ ինք զինքը Բատուայի Համալսարանին մէջ, և Սանդինի մեծանուն աստղաբաշխին առաջին աշակերտներէն մէկն եղաւ յամին 1806 : Այս իրարմէ բոլորովին տարբեր ուսմանց պարապմունքն պատրաստեցին պատանւոյն միտքն ու սիրտն յայնպիսի գործս ու ձեռնարկութիւնս որք ապա բարձրացուցին զնա յայնքան փառս :

Եթէ Թալէյրան աստուածաբանական ուսումը օգտակար կը համարէր քաղաքագէտ անձի, մենք շատ աւելի իրաւամբ կարևոր կը համարիմք զօրէնսգիտութիւն և զուսողութիւն, իբրեւ միակ միջոցը առ 'ի ուղղել զդասողութիւն քաղաքագիտի : Օրինաց գիտութիւնը կը տպաւորէ 'ի սիրտս մեր զգացումն արդարութեան, կարևոր ամենայն մարդոյ, իսկ ուսողութիւնը կը զօրացնէ զմիտս և պարգևէ այն մըտաւոր անդորրութիւնը որոյ առջին անհետանան թուուցիկ մտաց երևակայական խաբէութիւնքն : Այս երկու կէտերն շատ լաւ ըմբռնեց Բալէոքաբա, և յօգուտ իւր գործածեց ընդ ամենայն կեանս իւր :

Օրէնսգիտութեան և ուսողութեան մէջ յառաջանալէն ետքը, Մոտենայի զինուորական դպրոցը մտաւ, ուսկից ելաւ քիչ ատենէն պատերազմական ճարտարապետութեան սպայի աստիճանաւ : Մասն ունեցաւ 1813 ամին պատերազմաց մէջ ընդ հրամանատարութեամբ Պէրդրան զօրավարին . բայց գերի իյնալով Բոմբերանիա տարուեցաւ ուր ազատելու կերպն գտնելով հայրենիք դարձաւ . և երբ կ'առաջնորդէր իբրեւ զինուորական ճարտարապետ Բեպիէրա բերդին չորս կողմը կատարուած ամրութեանց, ինկաւ յիշխանութենէ Նաբոլէոն, և Լոմպարտո-վենետկեան գաւառքն անցան ընդ իշխանութեամբ Աւստրիոյ :

Այս եղած բանին վրայ սաստիկ դժկամակեւոյ Բալէոքաբա, թողուց զինուորական կենաց ընթացքը, չուղելով իր սուրն 'ի պէտս օտար տէրութեան գործածել : Մտաւ 'ի դաշտ անդորր հրահանգաց գիտութեանց և ճարտարապետական արուեստին, գործածել յօգուտ աշխարհի այն գիտութիւնն որով ճոխացեալ էր : Նախ վենետիկ ջրոց ու ճանապարհաց ճարտարապետներուն կարգն անցաւ . ապա գնաց 'ի Միլան վիճակազրաց պաշտօնէից անդամակցելու : Բայց որովհետեւ յայտնի է որ որ և իցէ գործոց մէջ ուր գործողքն շատ են, գործն ոչ շուտ և ոչ լաւ կը յառաջէ, նոյնը պատահեցաւ և այս առթիւս մէջ . ուստի Բալէոքաբա դարձաւ միւսանգամ 'ի վենետիկ, ջրաբաշխական գործոց վերայ կենալու : Եւ իրաւցընէ ծովն ու գետերն այս կողմերս մեծամեծ փնտններ կ'ընէին, որոց առջին պէտք էր շուտ, հաստատուն և տեական արգելներ կանգնել : Եւ յայսմ մասիս մեծ արդիւնք ունեցաւ Բալէոքաբա . որոց մէջ զայս միայն յիշեմք որ 1839 ամին ահաւոր ողողմանց ատեն, քառասուն օր կեցաւ կտրըճութեամբ Բոի ու Ատիճէի թումբերուն վրայ, որպէս զի յանկարծական մեծամեծ վտանգաց՝ մեծ ու զօրաւոր դարման մատուցանէ :

Բալէոքաբայի փառաց միւս յիշատակարանն է Մալամոքի թումբն . զոր 'ի գլուխ տանելու համար կարևոր էր ոչ միայն մեծ փորձ ու կատարեալ գիտութիւն այլ և աննկուն յարատեւութիւն ունենալ :

Բայց ոչ թէ իտալիա միայն կարօտ էր Բալէոքաբայի ջրաբաշխական հանճարոյն ու գիտութեանը, այլ և ուրիշ աշխարհներ : Երեք անգամ հրաւիրեցաւ յՈւնգարիա, առաջին անգամ 1842ին, նորա կարծիքն հարցնելու Պուտայի ու Բէշդի մէջէն անցած Դանուբին հատման կերպին վրայ . երկրորդ անգամ յամին 1846, գտնել կերպ մը որով ազատել Դիպիպքօ գետին կտրած լայնածաւալ դաշտավայրը, որ կը ժողովէր

բոլոր Դրանսիականիոյ ջուրերն, և ցամաքեցուցանել ճահիճներն որ ապականէին զմթնոլորտ: Բալէդքաբայի ըրած առաջարկութիւնը թէպէտ ընդունուեցաւ, բայց 'ի կախ մնաց գործադրութիւնը՝ 'ի պատճառս քաղաքական դիպացն որ տեղի ունեցան յայնժամ: Հուսկ ապա երրորդ անգամ յամին 1848, քննել Ֆիումէ քաղաքին նաւահանգստին կանոնադրութիւնը:

Մինչև հիմա նկատեցինք զԲալէդքաբա իբրև ճարտարապետ, տեսնեմք հիմա իբրև քաղաքագէտ: — Բալէդքաբայի քաղաքագիտական կեանքն սկսաւ իտալական ազատութեան արշալուսոյն հետ: Յառաջին շարժման անդ ազգային ազատութեան զօրաւոր և աննուաճելի զգածման զարթուցեալ յիտալիա 'ի սկիզբն 1848 տարւոյն, վենետիկ թօթափելով օտարին լուծն, ընտրած էր իրեն ժողովրդական կառավարութիւն մը և գլուխ կարգած իր մէկ քաղաքացին, զպերճացեալն ընտիր բարեմասնութեամբք, զԴանիէլ Մանին: Որուն գործակից և խորհրդակից էր Բալէդքաբա, պատրաստ՝ ծառայութիւն մատուցանել 'ի պաշտպանութիւն անկախութեան իտալիոյ:

Առաքեցաւ 'ի Դուրին առ 'ի աւարտել զգործ միութեան վենետիկոյ ընդ Բիէմոնդի: Բայց հասաւ անդ Բալէդքաբա Գուստոգլայի պատերազմին երկրորդ օրը: Կը գտնայ զսիրտս մեծամեծաց տէրութեան վշտացեալ, այլ ոչ յուսահատեալ: Թէպէտ անյաջող գնացեր էին դիւցազն Բիէմոնդի գործերն, և ապագայն մութ էր իր առջին, բայց հայրենասիրութեան հրով վառեալ ստորագրեց այն հանդիսաւոր առաջարկութեան՝ միութեան վենետիկոյ ընդ Բիէմոնդի: Եւ յետ դամ մի ստորագրելոյն, չմոռացաւ այլ ևս Բիէմոնդ ըզվենետիկ. և թէպէտ անագան այլ վերջապէս յետ ութևտասն ամաց խնդութեամբ ամփոփեց զնա 'ի ծոց իւր:

Բալէդքաբա կեցաւ Բիէմոնդ, ճանչցաւ զԲիէմոնդեցիս, և Բիէմոնդեցիք զինքը ճանչցան և սիրեցին: Եւ հօն

տարւոյ մը չափ քաղաքային ճարտարապետութեան վերատեսչի պաշտօն կատարելէն ետքը, Պաշտօնէից կարգը անցաւ, որուն նախագահ էր յայնժամ Մաքսիմոս Ալէլիոյ, և հասարակային շինութեանց պաշտօնեայ կոչեցաւ և գոգցես ինն տարի մնաց նոյն պաշտաման մէջ, և ոչ ոք մտածէր զայլ ոք փոխանակել 'ի տեղի նորա, վասն զի չէր ոք որ լաւագոյն քան զնա կարենար կատարել նոյն պաշտօնը: Իրեն պաշտօնատարութեան ատեն շինուեցան Բիէմոնդի երկաթուղոյ առաջին ու ընդարձակ դիժն. և շատցան բոլոր տէրութեան մէջ հաղորդակցութեան առաջին ու երկրորդ կարգի ճամբաներն:

Բայց Բալէդքաբա աւելի ևս անուն ժառանգեց 'ի ձեռն Ալպեայց և Սուէիզի: Յամին 1849 'ի 24 հոկտեմբեր ամսոյ կ'ապացուցանէր ձեռնարկութեան կարելիութիւնը. և կը յորդորէր զԲիէմոնդ որ դեռ այն ինչ զգաստացած էր յետ աղետից Նովարայի, ձեռն 'ի գործ առնել 'ի կատարումն մեծի գործոյս: Կը գուշակէր իմաստութեամբ որ ասով ապագային մէջ տէրութեան պատիւը և ոյժը կ'աւելնայ: Թէպէտ 'ի սկզբան մեծ հակառակութիւն կրեց գործը 'ի տղիտութենէ այլոց, բայց սկսաւ և կատարեցաւ յամին 1871 սեպտեմբեր 14 Բալէդքաբայի մահուանէն երկու տարի ետքը:

Հին ատեն « պարանոց հատանել » խօսքը այնպէս էր իբրև վորձել զանհնարինս. բայց ահա մեր օրերը կորընթոսի պարանոցէն աւելի դժուարահատանելի պարանոց մը բացաւ իր ծոցը՝ ճանապարհ տալու նաւաց տանողաց զքաղաքականութիւն յԱրևելս:

Կը ծնանի Լայպնիցի մտացը մէջ, թերևս լուսաւորեալ Հերոգոտեայ մէկ պատմութենէն, Միջերկրական ծովը Երեստեայ հետ միացընելու գաղափար մը: Իմաստասէրը կը հաղորդէ զայս Լուդովիկոսի ԺԴ, հրապուրելով զնա տիրել այնու ամբողջ Եգիպտոսի: Բայց մեծանուն թագաւորը յարգ չի տար գործոյն ու անփոյթ կ'ըլլայ: Դար մը

ետքը նաբուէոն կ'ընթանայ բոլոր փա-
րաւոնեանց երկիրը . և զիտունք ետեւէն
կ'երթան , մին անյադ ցանկացող աշ-
խարհակալութեանց , և միւսերն իմաս-
տութեան : Լըբէր՝ զինուց շառաչման ա-
տեն երկուց ծովուց մակերևութից տար-
բերութիւնները կը չափէ . երկրորդ
անգամ՝ կը չափէ նոյնը լաւագոյն կեր-
պով պոլոնիացին Կէտինի յամին 1820,
որուն տուած տեղեկութեանը կը հա-
մաձայնին ապա և անգղիացի չափողը :
Բայց վերջապէս փերդինանդոս Լըսէբս
կը քննէ առաջարկութիւնը , կը համո-
զուի կարելիութեանը , և յաջողու-
թեամբ 'ի գլուխ կը տանի : Բայց այս
մեծ գործոյն մէջ իրեն առաջին խորհր-
դակից օգնականն կ'ըլլայ Բալէոքաբա ,
որուն արդիւնքն է գործոյն պարզու-
թիւնը և նուազ ծախքով յաջողիլը :

Բայց երկարժամանակեայ զրաւոր
աշխատութիւնքն տկարացուցին Բալէո-
քաբայի աչքը , մինչև բոլորովին իսկ կո-
րոյս տեսութիւնը . սակայն մտաւոր կա-

րողութիւնն տակաւին յուժի ըլլալով ,
գտաւ միջոց այլ և այլ գրուածքներ
հրատարակելու ջրաբաշխութեան և եր-
կաթուղեաց վերաբերեալ . վերջապէս
մինչև ցմահ վաստակեցաւ յօգուտ հայ-
րենեաց , և արժանաւոր մահուամբ ա-
ւարտեց իր արդիւնաւոր օրերը յամին
1869 փետրուար 13 :

Բալէոքաբա թէպէտ բոլոր աշխարհի՝
բայց առանձին կերպով օգտակար ըլ-
լալով իր հայրենեաց և վենետիկոյ , ա-
նոր համար և սա շնորհալով իր ե-
րախտեաց պարտքը , տարւոյս ապրիլի
30ին հոյակապ յիշատակարան մը կան-
գնեց իր հոյակապ հրապարակաց միոյն
մէջ այն արժանաւոր անձին : Բալէո-
քաբա նստած դրից մէջ է , և ունի
ձեռքը տեղագրական տախտակ մը իր
մեծ գործոյն , Մալամոքի թումբին ,
մոօք հաշիւներ ընելու դրից մէջ : Ար-
ձանը յեցած է գեղեցիկ խարսխի մը
վրայ , ունելով պղնձադրոշմ այս տո-
ղերս .

Ճակատը .

ՊԵՏՐՈՍ ԲԱԼԷՈՒԳԱՐԱ
ԳԼՈՒԽ ԱՅԺՄԵԱՆ ԶՐԱԲԱՇԽԻՑ .

Կողմնակի .

. Ի ՎԵՆԵՏԿԵԱՆ ԱՓՈՒՆՍ ԵՒ Ի ՄՈՆՍԸՆԻ
ՅԱՂԹՈՂ ԲՆՈՒԹԵԱՆ ,
Ի ՄԷՋ ԵՐԵՏՐԵԱՑ ԵՒ ՄԻՋԵՐԿԻՐԱԿԱՆԻ
ՆՈՅՆ ԻՍԿ ԵՒ ՆԱԽԱՆՁՈՐԴԱՑ .

Կողմնակի .

ԸՆԿԵՐ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ
Ի ՎԵՆԵՏԻԿ ԵՒ Ի ԲԻԷՄՈՆԴ
ՍԿՍՈՂԱՑ ԻՑԱԼԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ .

Ի թիկանց .

ՄՆԱԻ Ի ՊԵՐԿԱՄՈՑ Յ՝Ց ՆՈՅՆԵՐԵՐԻ 1788
ՄԵՌԱԻ Ի ԴՈՒՐԻՆ Ի 13 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1869 .

Այս մեծագործ յիշատակարանաւ
արժանապէս պատուեց վենետիկ զբա-
լէոքաբա : Եւ հանդիսին որ շքեղ ու
սրտաշարժ եղաւ՝ ներկայ էին բաց 'ի մե-

ծամեծաց քաղաքիս՝ նաև մեծ բազմու-
թիւն մը օտարականաց ներկայացուց-
չաց տէրութեան և բարեկամաց Բալէո-
քաբայ : Եւ զանազան գովաստանաց

ներբողինի ճառեր խօսուելէն ետքը 'ի ցոյց բալէղբարայի արդեանցը ու արժանաւորութեանը, աւանդեցին յիշատակարանը ապագայ ժամանակաց, որ

պէս զի հայրենասիրութեան ու անխոնջ վաստակոյ օրինակ ըլլայ յետագայ սերնդոց :



ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԼԱՀՆԵՐ

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԼԱՀՆԵՐ

Երաժշտութեան զօրութիւնն մեծ է մարդկային մտաց ու սրտին վրայ, և այս ամենուն յայտ է : Կը տեսնեմք որ

զօրականն 'ի ձայն երգոյ կ'արհամարհէ ամենածանր վտանգն իսկ ու կը դիմէ 'ի ստոյգ մահ . նոքա որ երկչոտ են, մէյմէկ դիւցազն կը դառնան, և նոքա որ վայրենաբարոյ ու անուպայք են՝ կը